



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Արժեքային համակարգի ձևավորումն ըստ Բակունցի «Միրանի փողը» պատմվածքի ուսուցման
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Գոհար Մուրադյան
ՄԱՐԶ	Արագածոտն
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Լեոնապարի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

1.	Ներածություն.....	2
2.	Արժեքային համակարգի ձևավորումն ըստ Բակունցի «Ծիրանի փողը» պատմվածքի ուսուցման.....	5
3.	Եզրակացություն.....	19
4.	Գրականության ցանկ.....	21

Ներածություն

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը:

Գիտությունների զարգացման և փոխներթափանցման ժամանակակից փուլում զուգահեռաբար կարևորվում է նաև այդ գիտությունները ներկայացնող առարկաների դասավանդումը և հանրակրթական դպրոցում, և բարձրագույն: Բարդ և անգամ աստիճանավորված գիտությունները ինչպես 20-րդ, այնպես էլ 21-րդ դարում պարտադրում-պահանջում են և ուսուցման, և կիրառման որոշակի տրամաբանության, դասավանդման մեթոդիկա: Բոլոր գիտություններն էլ ըստ էության փորձի արդյունք՝ եզակի կամ ընդհանրական, հումանիտար կամ էլ բնական: Ահա, հենց այս առումով են կարևորվում գիտության այս ճյուղերը ներկայացնող առարկաների դասավանդումը և դասավանդման մեթոդական հմտությունը, տեսությունն ու փորձը իրար շաղկապելը և դյուրամատչելի դարձնելը:

Գրականությունների, մասնավորապես հայ գրականության և նրա դասավանդման արդյունավետությունը, նպատակասլացությունը էապես հանգեցնում է դրանց կիրառական մեթոդիկայի անհրաժեշտությանը: «Գաղտնիք չէ, որ աշակերտության կողմից գրականությունը հաճախ յուրացվում է սոսկ իբրև գիտական-պատմական փաստերի շարք, առանց նրանց տեսակա- իմաստավորման»¹:

Հետազոտության արդիականությունը

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:

Հետազոտության նպատակը

Հետազոտության նպատակներն են գրողի կենսագրության և երկրի պատմաքաղաքական իրավիճակների բացահայտումը, գրողի մարդկային նկարագրի բացահայտումը, սեփական ժողովրդի նկատմամբ գիտակցված, ազգային արժանապատվությամբ զուգորդված վերաբերմունք, հայրենասիրության և ազգի հարատևության գաղափարի ընկալում, ազգային արժեքների և խորհրդանիշերի հանդեպ հպարտության ու հիացումի սերմանում:

¹ Է. Ջրբաշյան, Շ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, Երևան, 1972, էջ 2

Հետազոտության խնդիրները

- Տեսնել ստեղծագործության մեջ արտահայտված գաղափարների արդիական հնչեղությունը, անցյալի և ժամանանակից կյանքի ներքին կապը:
- Հայ գրականության մեջ աշխարհաքաղաքական տեղաշարժերի գեղարվեստական վերարտադրության և հայրենիքի փրկության գաղափարների արծարծում:
- Դասավանդման ժամանակակից մեթոդների ուսումնասիրության և գործնական կիրառության միջոցով աշակերտին մասնակից դարձնել հանրային կյանքում կատարվող տեղաշարժերին, ձևավորել ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ԸՍՏ ԲԱԿՈՒՆՅԻ «ԾԻՐԱՆԻ ՓՈՂԸ»
ՊԱՏՄՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ



Իր գրույցներից մեկում դառնալով Մարտիրոս Սարյանին, Ավետիք Իսահակյանն ասել է. «Կոմիտասի Երգերի և քո գույների կապակցությամբ խոսում են իբրև այնպիսի հրաշքի մասին, որը անհնարին է արտահայտել խոսքով: Բայց, գիտես, իմ կարծիքով, դա այնքան էլ ճիշտ չէ: Հայաստանում կար մի գրող, որի բառերը երգում էին կոմիտասյան հանգով և փայլատակում էին քո կտավների բոլոր գույներով: Այդ գրողը Ակսել Բակունցն է»:²

Հեքիաթի պես էր թվում նրա գրական մուտքը. բայց միայն արտաքուստ: Դա նախապատրաստված էր մեծ փորձով ու տեսական աշխատանքով: Ակսել Բակունցն առասպելի հերոսի պես, ընդամենը մի քանի տարվա ընթացքում, սովորական գյուղաթղթակցից դարձավ հայ մեծ գրող, իր մեծության կենարար հյույթերը վերքաշելով հայոց բնաշխարհի գույներից, հայոց պատմության ծալքերից, հայ ժողովրդի հոգեկան պատկերի խորքերից:

² Ակսել Բակունց, Երկեր, Երևան 1986, էջ 3

Ժողովուրդների և ազգերի պատմության մեջ լինում են այնպիսի ծնունդներ, որոնք հետո դառնում են նրա մեծագույն երջանկության և միաժամանակ մեծագույն ողբերգության անմոռանալի երգը: Բակունցի նման գրողի և մարդու բացառիկ ծնունդը մի այդպիսի երջանկություն, և նրա եղերական վերջալույսը մեծագույն ողբերգություն էր ոչ միայն մեր գրականության, այլև մեր իսկ ժողովրդի համար: Իր կյանքի ծանրագույն պահերին անգամ Բակունցը հավատարիմ մնաց իր էությանը, գլուխ չխոնարհեց ոչ մի բռնակալի և ոչ մի բռնակարգի առջև, քայլեց իբրև մերկ ճշմարտություն ժամանակի փոքր ու մեծ դիմակահանդեսներում, մնաց այն, ինչ կար՝ իր իսկ պատկերած բնաշխարհի կուսական մաքրությամբ, անարատ մտքով և լույսով: 1930-ական թվականների ողբերգության վերքերում ցավ կա դեռ, արյուն կա տաք, և դեռ միայլու են սերունդների սրտերը, և ցավի հետ օրեցօր զորանալու է Բակունցի ուժը...

Դասն սկսում ենք ընդհանուր հարցերով՝ ներկայացնել Բակունցի ժամանակաշրջանը, Չարենցի ո՞ր ժողովածուն ենթարկվեց կալանքի, ովքե՞ր զոհ գնացին անհատի «պաշտամունքին, ինչպիսի՞ անհատականության տեր մարդիկ են գրողները և ինչո՞վ են տարբերվում սովորական մարդկանցից:

Ստալինի և Բերիայի պատճառով երկրում ստեղծվել էր կասկածամտության, վախի ու սարսափի, մեկը մյուսին հետապնդելու, մեկը մյուսին լրտեսելու և մատնելու անավոր մթնոլորտ: Ստեղծվել էր համընդհանուր հոգեգարության մի վիճակ:

Աշակերտները գիտեն, որ գրողները ունեն նուրբ դիտողունակություն և փոթորկոտ բնավորություն, ժամանակաշրջանի խոր ըմբռնում և հեռատեսություն:

«Ծիրանի փողը» գրողի գնդակահարության պատճառ դարձավ: Բակունցն այն գրել է 1931թ., տպագրել 1933-ին, դրանից էլ սկսվում են նրա հալածանքները:

Լրացուցիչ տեղեկություն: Ըստ ՀԽՍՀ լուսժողովատի 1932 թ. որոշման՝ տարրական դպրոցներում ուսուցիչների ռուսերեն չիմանալը համարվել է ինտերնացիոնալիզմին խորթ երևույթ՝ նացիոնալիզմ: Բողոքելով այս որոշման դեմ՝ Բակունցն

ասել է՝ Հայաստանի ղեկավարներից ոմանք, օրինակ՝ Կենտկոմի քարտուղար Հակոբովը հայերեն չգիտի: Իսկ նրանց, նաև ինժեներատեխնիկական մտավորականության երեխաները, սովորում են ռուսական դպրոցներում: Այստեղից էլ նրանց ասելությունը հայ մշակույթի, հայոց լեզվի նկատմամբ և հանրապետության ռուսականացնելու չքողարկված միտումը:

Արձանագրվել են նաև այս մտքերը. «Մեր խումբը հատկապես մեծ կազմակերպչական և գործնական աշխատանք է տարել Չարենցի «Գիրք ճանապարհի»-ի կապակցությամբ: Խմբում բազմիցս քննարկելով գրքի արգելման հարցը՝ մենք այդ արգելքը դիտում ենք որպես Անդրերկրկոմի կողմից Հայաստանի ազգային գրականության դեմ ուղղված արշավանք»: Գիրքը փրկելու համար, առանց կուսակցությունից հեռացվելու վախի, «խմբի» անդամները որոշում են նամակով դիմել երկրի ղեկավարությանը: Խանջանը ձեռագիր վիճակում կարդացել և տպագրության է երաշխավորել ոչ միայն Չարենցի ժողովածուն, այլև Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» վիպակը և Բակուցի «Ծիրանի փողը» պատմվածքը:

1930 ական թթ. Բակունցի ստեղծագործություններին տալիս էին ծանր գնահատականներ: Տիրող քաղաքականության ծանր ձևերից էր նաև ինքնաքննադատությունը: Բակունցը մի քանի անգամ էլույթ է ունենում ինքնաքննադատությամբ: Սա ծանր դրություն էր նրա համար: Մարդուն ստիպում էին դատապարտել իրեն, հրաժարվել գրածներից: Այսպես՝ Բակունցը մի ձեռքով գրում էր «Ծիրանի փողը», մյուս ձեռքով այն քննադատում: Գրողը հրապարակավ պիտի պատասխան տար և զոջար գրածի համար: Ահա այս պայմաններում Բակունցին հայտարարում են «ժողովրդի թշնամի», տեղեկատվության միջոցով այս մասին հավատացնում շրջապատին: Հետևում է կրակոցը՝ Բակունցին ենթարկում են պատժի առավելագույն չափի՝ գնդակահարության. Տարիներ անց՝ 1955 թ. մարտի 2-ին Բակունցն արդարացվում է:

Դասին ընթերցվում է Բակունցի դիմումը ՀԿ(Բ)Կ Կենտկոմի քարտուղար Ամատունուն և ՆԳԺԿ լիազոր, պետական անվտանգության մայրը Մուղղուսուն:

«Բայց հեշտ չէ նաև մտածելը, գլխիս մեջ ծանր մտքեր են պտտվում, ենթադրենք, եթե ես լինեի օճառի գործարանի տնօրեն, իմանայի այդ գործը և հանցագործության համար ուղարկվեի այդ խուցը, կարող էի մտածել, որ կգնամ ինչ-որ տեղ, բայց և այնպես նորից օճառ կարտադրեմ, փառք, մեծ է մեր Միությունը, իսկ օճառի գործարաններ հազարներով կան: Բարեբախտաբար, թե դժբախտաբար ես գրող եմ, այսինքն, աշխատավոր, աշխատանքի բնույթով կապված որոշակի երկրի, մեկ ժողովրդի, գլխավորը՝ նրա լեզվի, բարքերի հետ, այն ամենի հետ, որտեղից գրողը հայթայթում է իր գույները: Ես գիտեմ միայն մեկ լեզու՝ հայերենը, ես 20 տարեկան չեմ, որ նպատակ դնեմ ինչ-որ կերպ սկսելու նոր կյանք: Իմ տարիքում մարդիկ քիչ բան են ձեռք բերում: Կյանքն այնպես է դասավորվել, որ աշխատանքի միակ ձևն է քեզ համար դարձել ընդմիջտ սիրելի:... Հիշելով այն օգտակարը, ինչ ես արել եմ, ուրախանում եմ, հուսահատությունը ժամանակավորապես ինչ-որ տեղ հեռանում, ցրվում է գլխիս միջի մշուշը, լույսն ու ուրախությունը հորդում են հոգուս մեջ, քանզի չե՞ որ ինձ պատժում է կուսակցությունը, քանզի երբ որ բացեն իմ անձնական հաշիվը, նայելով իմ հանցագործությունների ծախսերի թերթիկին, կնայեն նաև իմ մուտքի մի մասը, ուր ինչ-որ բան գույքագրված է խորհրդային Հայաստանի երկաթե ֆոնդի ցուցակներում: Դա հանգստություն է բերում, բայց միայն մի կարճ ակնթարթ: Ես չեմ սպառվել, որ ինձ հանգստացնեմ արդեն գրածներով: Թող նա հանգստանա, ով ոչինչ չունի տալու և չգիտի՝ ինչու ստեղծագործել: ... Ինձ գրելու և կարդալ հնարավորություն տվեք, ինձ գիրք ու մատիտ ավեք: Որքան ժամանակով որ անհրաժեշտ կհամարեք՝ ինձ ուղարկեք Հայաստանի որևէ հեռավոր շրջանը, գյուղ կամ խորհրդային անտեսություն, միայն ես լսեմ կենդանի խոսքը, միայն թե ես կարողանամ աշխատել և պատմության ու կուսակցության դատաստանի առջև ներում վաստակել:

Ես «խորհրդային Հայաստանի լավագույն արձակագիրն էի» («Պրավդա 1934».)
հայ խորհրդային գրականության կառքին լծված քեղածի, թողեք որ ես մնամ
Խորհրդային Հայաստանի դռան հավատարիմ շունը: 6. 16. 1936 թ.»³

Բակունցը նոր հուն բացեց հայ գրականության մեջ: Նա գնաց հոգու կանչով.
Երգեց հեռվում մնացած ծննդավայրի կարոտը: Հ. Սահյանը այսպես է ներկայացնում.

«Հագրոն է նստել օջախի քարին,

Հիշում է կորած երկիրն ու հողը,

Տխուր նայում է Հայկական Պարին

Եվ նվագում է ծիրանի փողը»:

«Ծիրանի փողը» պատմվածքն ուսումնասիրելիս անհարժեշտ է համեմատություն
տանել «Լառ-Մարգար» պատմվածքի հետ: Սկզբում սովորողները ներկայացնում են
երկու պատմվածքների դիպաշարերը, հերոսների նմանությունները:

Բակունցը գրականություն բերեց հայրենաբաղձություն և համարձակորեն
փորձեց ներկայացնել այն: 1930-ականներին հայրենակորույս հայ ժողովրդի կարոտի
ու կորուստների մասին գրելն անգամ սխրանք էր: Հայրենիքը կորցրած հայրորդիների
կարոտն առօրեական զգացում չէր, այլ փոխակերպվում էր անբուժելի կարոտախտի:
Բակունցը դարձավ կորուսյալ հայրենիքի տանջալից կարոտի մեծ երգիչը: Երկու
պատմվածքներում էլ իշխողը հայրենիքի կորստյան գաղափարն է և վերադարձի
բաղձանքը: Ո՞վ էր Լառ -Մարգարը. «Լառ-Մարգարը տեղացի չէ: Պղտոր հեղեղի
բերանն է ընկած տաշեղի պես շատ ափերի է զարկվել, վերջը այլիքը լափու է տվել և
Լառ- Մարգարին իր թոռան հետ գցել է այդ գյուղը»: Լառ-Մարգարը հոգով կորուսյալ
հայրենիքում է՝ այնտեղ: Կորուստների առաջ Մարգարը շփոթվել է, բայց պահպանել է
հոգու վեհությունը, կենսասիրությունը: Աշխատանքի անսահման սիրով է ողողված

³ Ալեքսանդր (Ակսել) Ստեփանի Բակունց: Մեղադրական գործ N 4131, Ե., «Հրագրան»- 1 ՍՊԸ, 1999, էջ
54-55

Լառ-Մարգարի կերպարը, աշխատանքն է զարդարում ոչնչով աչքի չընկնող, «նոքերը բարակ ու երկար» արագիլ հիշեցնող ջրվորին. «Նրա համար ամենից մեծ հաճույքը այգին ու արտերը ջրելն էր: Երբ բոբիկ, արևից խանձված նոքերով քայլում էր առվի եզերքով, բահով ճումերը առվից դեն գցում, որ ջրի հոսանքը սահուն լինի, -Լառ-Մարգարին այնպես էր թվում, թե ջրի պապակ արտերն ու ծարավ այգիները տապ արած իրեն են սպասում»:

Ինչպիսի՞ մարդ էր Լառ-Մարգարը, հոգեկան ի՞նչ առաքինություններով էր օժտված. «Քչերն էին փորձում ջրվորին խաբել, հերթից ջուր գողանալ: Վայ թե իմանար Լառ Մարգարը. կթոնթորար, կկանչեր, բահը գետնով կտար: Ծառո պտուղ չի տար, յավրիս, գողության մի վարժեցուր: Լառ-Մարգարի համոզումն էր այդ: Եվ երբ բարկանար, այդ խոսքը կասեր, իսկ եթե կասկածող էր լինում, ավելացնում էր. - էս հասակս քաշեր, նոր պիտի սուտ խոսիմ...»:

Սովորողները թվում են Լառ-Մարգարի առաքինությունները աշխատասիրություն, ազնվություն, հոգու վեհություն, արդարամտություն: Աշխատանքի թեժ պահին էր նա թողել իր բնօրրանը. «...Կտավատը կապույտ ծաղիկներ էր բացել, ծիրանն արդեն դեղնել էր: Վար էր անում, արորը փափուկ հողում ամռան ցելի ակոսներ էր ծրում...»: Մարգարը չի կարող համակերպվել նոր վիճակին, հայացքը միշտ հեռուն էր՝ այնտեղ. «Ուրիշ ջրեր էին. Մարգարը ինչքան խմում էր, չէր հագնում», իսկ կինը բողոքում էր. «Քար պիլա չկա մարդ, աս ու՞ր բերին մեզ»:

Կորցրած հայրենիքի անհուն կարտը անթեղված էր Մարգարի հոգում: Բավական էր նայեր երկնքին, տեսներ թափառող ամպը կամ ամպի ծվենը, բացվում էր հիշողության կծիկը. Նա երազում էր բարձրանալ ամպի վրա և այդտեղից տեսնել կորսված հայրենիքը:

Հայրենիքից ու որդուց զրկված Մարգարը կորցնում է նաև կնոջը, պայքարում դառը ճակատագրի դեմ: Նա իր միակ շառավիղ ու միակ հույս թոռնիկին առած և հայրենի երկրից մնացած ծիրանի կորիզները ծոցում պահած նայում է թոռան աչքերին,

աչքերի մեջ տեսնում անհետ կորած որդու պատկերը և, զսպելով իրեն, ասում. «Մեր երկիր, յավրիս: ...Լառ Մարգարը ոչ ոքի չասաց, թե ինչու արցունքներ երևացին աչքերին, երբ առաջին անգամ գնացքի պատուհանից Արարատի ձյունոտ գագաթը տեսավ: Այդ երկրում պիտի ծլեին ծիրանի կորիզները»: Հայրենի երկրում պիտի վերընձյուղվեին ծիրանի կորիզները և պիտի վերընձյուղվեր Թորոսիկը, այսինքն՝ հայր: Մարգարը տեսնում է, թե ինչպես «դպրոցի բակում վազվզում էին երեխաները խաղում, կանչում, և երեխաների հետ խաղում է Թորոսիկը»:

Մարգարը պատմվածքում վերածվում է կերպար խորհրդանիշի, կերպարընդհանրացման: Նա հայ ժողովրդի սոկունության, անընկճելիության մարմնավորումն է, ստեղծագործ ու աշխատասեր հայ ժողովրդի ուժի արտահայտությունը: Մարգարը օժտված է հայ ժողովրդին բնորոշ պարզությամբ ու անկեղծությամբ:

Թորոսիկը կարծես ժողովրդական էպոսի քեռի Թորոսի երկվորյակն է, որ պիտի կրթվի ու իմաստնանա: Թորոսիկը հայ ազգի շարունակման ու հարատևման խորհրդանիշն է, իսկ հայ մարդն ուժեղ է իր սեփական հողում: Ինչպես «Արշակ և Շապուհ»-ում Արշակն է ուժեղ իր հողի վրա, այնպես էլ Թորոսիկն է հզոր հայրենի հողում, որ պիտի սերունդ տա, շարունակի իր տոհմը՝ իր հայությունը:

Դասին կարելի է ընթերցել հետևյալ պատմությունը, «Հայկական լեռնաշխարհը բազում մեծ ու փոքր երկրաշարժեր է տեսել: Դրանցից մեկը Մասիսի կատարամերձ Ակոռի գյուղի երկրաշարժն է (1840, հուլիսի 20), երբ հենց առաջին հարվածից երկրի երեսից անհետացել են Ակոռի գյուղն ու նրա կողքի Սուրբ Հակոբ եկեղեցին՝ իրենց հետ տանելով ողջ բնակիչներին՝ մոտ 2000 մարդ»:

Գերմանացի ճանապարհորդ ու բնագետ Մորից Վագները այդ երկրաշարժից երեք տարի անց՝ 1843-ին, Աբովյանի հետ բարձրանում է Ակոռի: Երկրաշարժն Ակոռիից ոչ մի հետք չէր թողել, բայց ահա գյուղի հռչակավոր այգին կանգուն էր մնացել. 13 ծիրանենի: «Այսպիսի հրաշք կարող էր միայն հայոց աշխարհում լինել, - գարմացած

բացականչել է Վագները, ամեն ինչ կործանվել է, համարյա բան չի մնացել, բայց ամենակարող շարժը չի կարողացել տապալել հայկական ծիրանենիները: Չէ՛, Խաչատուր, սա մեծ խորհուրդ ունի: Ծիրանը հայկական երկրի խորհրդանիշն է: Այս կանգուն ծիրանենիները կարծես թե ուզում են ասել, որ ինչ արհավիրք էլ լինի՝ Հայաստանը հուր հավիտյան կանգուն կմնա: Խորհուրդ ունի նաև 13 թիվը, որ հավաստում է, թե ոչ մի պատահականություն չի կարող աշխարհի երեսից վերացնել հայ ժողովրդին... :⁴



Ուրեմն, ո՞վ էր Հազրոն, որտեղի՞ց է գաղթել, ի՞նչ պատճառով էր ընկել այնպիսի տեղեր, «ուր ոչ լեռներ կային, ոչ էլ լեռնային լույս աղբյուրներ»: «Նրա հայրենիքը եղել է քարոտ Սասունը, այդ խուլ երկրի ամենախուլ անկյունը, որտեղ ձորերը դառնում են կիրճեր, լեռների գագաթները ապառաժներ. Նրա մանկությունը խաղացել է այդ քարափների վրա: Ինչպես ֆավն այդ պատանին փող է նվագել քարանձավներում և

⁴ «Հանրագիտակ օրացույց», էջ 13

նրա պարզ երկերին արձագանքել են ձորերը: Թվում էր, թե մինչև մահ կապրի այդ ժայռերի վրա, ինչպես իր պապերը, կցանի կորեկ, աշնանը կիջնի ձորերը, կհավաքի միրգ ու ցախ, ձմեռը կլսի հին զրույցներ՝ Ձենով Օհանի, Մսրա Մելիքի ու Թլոր Մանուկի մասին»:

Վերհիշում են «Սասունցի Դավիթ» էպոսը, ներկայացնում, թե ինչ գիտեն Սասունի մասին, ովքեր են թվարկված հերոսները: Անձանոթ է միայն ֆավնը՝ այծի մարմնով և մարդու գլխով առասպելական կենդանի այծամարդ: Կարելի է հանձնարարել ընթերցելու «Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները»:

Ինչու՞ է հիշում էպոսը, առասպելականը: Սովորողները բացատրում են, որ իրականությունը հյուսված էր երազայինից ու հեքիաթայինից, բայց այն վերածվում է ողբերգության. պայթում է պատերազմը: «Ամպերի փոխարեն քարափների վրա նստեց այրվող գյուղերի մուխը: Բոցը հասավ դեղնած արտերին, կրակը լափեց և՛ սերմ և՛ սերմնացան»:

Ահա Հազրոն էլ Մարգարի նման «քամու բերանը ընկած տաշեղ էր», որ մի խումբ սասունցիների հետ ապաստանել էր Ձյանաբերդում: Հայրենիքից բռնությամբ անջատված հայորդիները պահպանում են իրենց հայությունը, կապը ծննդավայրի հետ: Դա արտահայտվում է նրանով, որ շարունակում են արյամբ ու հիշողությամբ կապված մնալ հայրենի լեռներին ու ձորերին, պահպանում են ծննդավայրի սովորույթները տան դռներին նալ են խփում, կավե կարասների վրա, թոնրի շուրթերին խաչ են փորագրում, իսկ Սևդոն «հագնում է մազեղեն կոշիկ՝ «խարուկ», ինչպես Մոսկանա երկրում» և «իբր բերանին նալ է զարկել» և չի խոսում նրանց հետ, ովքեր Մոսկանից չեն:

Այս մարդկանց միջավայրում առաձնանում է Հազրոյի կերպարը: Նա դառնում է կերպար-խորհրդանիշ: Հեղինակին գյուղի ճանապարհին հանդիպելուց հետո, տեսնում է նաև երեկոյան և ասում. «Բարի տեսանք»: Պետք է հիշեցնել մեկ այլ ծերունու կերպար, որ նույնպես երկու անգամ է բարևում հյուրին: Դա հայկական հյուրամե-

ծարության ձևերից է. հյուրին ողջունում են ամեն մի հանդիպմանը: Սովորողներին պիտի հիշեցնել Թումանյանի «Հառաչանք»-ի ծերունուն.

«Նորից բարևեց իր երկրի կարգով

Ու բարի մաղթեց ջահել դոնախին»:

Հազրոյի սրինգը ասարբերվում էր ուրիշ սրինգներից. «Տղան տնից բերեց սրինգը, այն ծիրանի փողը, որ քիչ ավելի երկար էր մեր հովիվների սովորական սրինգներից. Լուսնի տակ ես դիտում էի նրա կարմրավուն փողը գիշերային գովի դիմաց, և փողը մեղմ քամուց մետաղի ձայն էր հանում»:

«Լառ-Մարգար» պատմվածքում առկա են ծիրանի կորիզները, իսկ այստեղ ծիրանի փողն է: Նախորդում չկային քարեր, ինչի պակասից նեղվում էր Լառ-Մարգարի կինը, իսկ այստեղ պակասում են լեռները, լեռնային լույս աղբյուրները: Պարզ է, որ դրանք Հայաստանի և հայ ժողովրդի խորհրդանիշն են:

Արժեքային համակարգի ձևավորման գործում մեծ դեր ունի ազգային խորհրդանիշերի ըմբռնումը և դրանց նկատմամբ սիրո ու երկյուղածության դրսևորումը: Սովորողները պիտի կողմնորոշվեն, թե հային բնորոշ ինչ խորհրդանիշեր, ազգային հատկանիշեր ու սովորություններ կան պատմվածքներում: Այստեղ խորհրդանիշեր են քարերը և քարոտ Մասունը, Մասնա դյուցազներգությունն ու Մարութա սարը, Արարատը, Հայկական Պարն ու «Յար խուշտա» պարը, որ իրենց հետ բերել են ավանդապահ ու նախանձախնդիր սասունցիները. «Եվ հետզհետե, ինչպես լուսաբացը լեռներում, զարթնեց «Յար խուշտան»: Նա սկսեց դանդաղ ու մեղմ, հետո վայրենի կանչով վեր թռավ ջրբաժանը, կազնեց կտուրի մեջտեղ, նրան հետևեց երկրորդը, երրորդը և շուտով նրանց շարքը, ինչպես երկու վիթխարի ապառաժ, զարնվեցին իրար՝ ձեռքերով, ծնկներով և կրծքով: Նրանց ձեռքերի հարվածը պողպատի ձայն էր հանում, և կայծեր էին թռչում նրանց բորբոքված աչքերից: Երբ մի շարքը մյուսին ետ էր մղում ձեռքերի հարվածով, կարծր կրծքերի զարկով,

նահանջողները արշավում էին նոր թափով, որպեսզի վրեժխնդիր լինեն ամոթի և պարտության համար»:


«Յար խուշտա» պարը կորուսյալ աշխարհի մի սրտակեղեք նկարագրություն է: Սասունցիների պարը հայ ժողովրդի անպարտելի ոգու արգասիքն է: Հաջորդում է ասմունք Գ. Էմինի «Սասունցիների պարը» բանաստեղծությունից.

«Պարեց Սասունն, ու ողջ աշխարհը հիացավ,

Պարեց Սասունն, ու ողջ աշխարհը հասկացավ,

Որ պար չէ սա, այլ մի երկրի

Քաջ պատմություն... »:



Ինչքան կարոտ, հպարտություն, ժողովրդի ոգու անընկճելիություն, հերոսություն են ամփոփում սասունցիների պարը և Հազրոյի նվագը. «Կա և թախիժ այդ երգի մեջ, որ կարծես մեկը մոլորվել է խոր ձորերում և տխուր հեկեկում է, կա և ջինջ

ուրախություն, երբ լեռների վրա ծագում է արևը, ելնում է ծուխը, մշակը գնում է աշխատանքի, վերջապես կան և կարոտի հնչյուններ՝ վերադարձի և վերջին հույսի»

Հայրենի եզերքին փարվելու հույսը դառնում է Հազրոյի երազանքը. «Հաղ մի երթամ մըր քարերին, մըր ձորերին, մըր Մարութա բարձր սարին: Առնիմ զիմ ծիրանի փող, ժողվիմ մարդերու, նստիմ անուշ խոտերու վրեն, հանց գառներ մարդիկ նստին զիմ չորս բլուր, երգեմ էնոնց խաղաղության զիմ երգեր, մարդիկ հալալ գուլալ ախպրտոց պես գրկեն զիրար, չեղնի ո՛չ տեր, ո՛չ մշակ, ո՛չ թուր, ո՛չ բռնություն.

-Հազրո, իսկ ու՞մ կտասս քո ծիրանի փողը: -Ձիմ փող կիտամ իմ քաջարժիվ թոռնիկին»: Այսինքն՝ ժառանգաբար պիտի ծխացնեն հայրենիքի կարոտը մինչև բացվեն հույսի դռները:



Ամփոփելով երկու պատմվածքները՝ պիտի ասել, որ Բակունցը բացեց կորսված հայրենիքի գրական ճանապարհները, որ հետագայում պիտի շարունակեին Քոչարը, Դաշտենցը, Գալշոյանը: Հարց է առաջանում. չէ՞ որ կարոտը ապրում էր սփյուռքում, բայց սփյուռքահայ գրողները կարող էին համարձակորեն խոսել այդ մասին, մինչդեռ

հայրենիքում մեծ համարձակություն էր պահանջվում: Բակունցը գնաց այդ քայլին, և նրա համար հատուցեց կյանքով: Դժվար օրերին Չարենցը գրեց.

Այս ամենի համար և Ծիրանի

Հազարամյա փողի համար քո այն,

Որ դարերով տենչած խաղաղության

Երգն է հնչում, և մեր ժողովուրդը քանի

Ունի գեթ ափ մի հող արեգակի ներքո

Հնչելու է երգեր եղբայրական:

Այս ամենի համար, օ, իւեղճ իմ բարեկամ,

Ես քեզ օրհնում եմ արդ իմ անաղարտ երգով,

Այս ամենի համար և քո եղերական

Տառապանքի համար, որ արդ կրկին

Վեհություն է խառնում քո անաղարտ երգին

Ես քեզ պարզում եմ ձեռք եղբայրական:

«Իսկ դպրոցից մի քիչ հեռու՝ իրենց տան առաջ ծիրանի տունկերն են ձգվում արևի տակ», - այսպես է վերջանում «Լառ-Մարգար» պատմվածքը: Լավատես է նաև Հազրոն: Բակունցի լավատեսությունը հայ ժողովրդի հոգեկերտվածքն է և նրա գլխավոր հատկանիշերից մեկը. «Էսօր դուման է, վաղը արևն կծագի»: «Դուման» օրերում՝ ստալինյան վարչակարգի պայմաններում, Չարենցը, Բակունցը և շատերը պաշտպանեցին ճշմարիտ սկզբունքները, պահպանեցին իրենց մարդկային և ազգային դիմագիծը: Ծիրանի փող-եղեգան փողից ծագեց արևը, եկավ նաև նրանց արվեստի ու վաստակի գնահատումը: Իսկ ազգային արժեքներն ու մշակույթը պիտի գնահատվեն և

փոխանցվեն սերնդեսերունդ, որպեսզի ապրի հայր, սիրի իր երկիրը և պայքարի հայրենիքի համար:



Եզրակացություն

Հայրենասիրությունը Բակունցի մեջ չմնաց սուսկ որպես մի զգացմունք, թեկուզ և մեծ զգացմունք: Հայրենասիրությունը Բակունցի դեպքում դարձավ տեսանելի վարք, դարձավ նաև ճակատագիր: Եվ սա բոլորովին էլ չափազանցություն չէ, այլ պարզ հետևությունը նրա ապրած կյանքի և գրական վաստակի: «Ծիրանի փողը» դարձավ այդ մեծ սիրո՝ ոչ մի ծավալ չընդունող պարունակությունը: Երկիր հայրենին հնարավոր չեղավ փրկել զենքով, գոնե գրչով պետք է փրկել այն՝ որպես պահանջատիրություն գալիք սերունդներին ժառանգելու համար: Գաղափարական այս պայքարն էր առաջ տանում Բակունցը ստալինյան բռնապետության տարիներին, և դա մի սովորական գրապայքար չէր, այլ կյանքի ու մահվան խնդիր՝ խոսքի ուղղակի իմաստով: «Լաո-Մարգար»-ում չկա պայքարի այն ոգին, որ առկա է «Ծիրանի փող»-ում, չկա նաև հայրենիք վերադառնալու հույսը, քանի որ Լաո-Մարգարը ծովն է նետում հին տան բանալիները: Արդյոք Բակունցն արդեն կորցրե՞լ էր հայրենիքը վերագտնելու հույսը: «Լաո-Մարգար»-ը գրվել է ավելի շուտ, քան «Ծիրանի փողը», ուրեմն՝ գիտակցության երկունքով վերածնվել է մեծ հույսը. «Հաղ մը երթամ տեսության մըր քարերին, մըր ձորերին, մըր Մարութա բանձր սարին...»: Սա Բակունցի գաղափարակիր հերոսի երազանքն է, իսկ կտակը՝ կորուսյալ հայրենիքի հիշողությունը. «Զիմ փող կտամ իմ քաջարժիվ թոռնիկին...»:

Իսկ «Ծիրանի փողը» մի նոր ուղղություն բացեց հետագա հայ արձակի մեջ և ճանապարհ ցույց տվեց դեպի պատմական հայրենիք, որը թեև մեզանից խլված է, բայց որպես շարունակվող հայրենիք ապրում է յուրաքանչյուր հայի գիտակցության մեջ:

Հայրենասիրական երկերը ուսումնասիրելիս աշակերտները հասկանում են, որ հայրենիքը ոչ միայն նրա հողը, նրա օդը, ջուրն ու բնությունն է, այլև նրա ժողովրդի լեզուն, մշակույթը, ավանդույթը: Գրողները պատգամում են սովորողներին ոչ թե սուսկ սիրել հայրենիքը, այլ լինել նրա մարտիկը, սրբազան սիրով, նվիրվածությամբ, երախտագիտությամբ ու ակնածանքով վերաբերվել նրա պատմությանը, մշակույթին,

անբաժան լինել նրա ճակատագրից հատկապես ծանր օրերին: Հայրենասիրության դաստիարակումը տվել է իր պտուղները:

Ժամանակակից դպրոցի առջև դրված կարևորագույն խնդիրներից մեկը ուսուցման և դաստիարակության գուգակցումն է: Մեծ է գրականության դերը հատկապես մատաղ սերունդի հայրենասիրական դաստիարակության գործում: Նախ անհրաժեշտ է պարզել, թե ինչ է հայրենասիրությունը: Սովորողներին բացատրում եմ, որ հայրենասիրությունը մարդու բարոյաքաղաքական և իրավական ըմբռնումներում արտահայտվող այն մեծ ներշնչումն է, որը, որպես հոգևոր սնունդ, նրա էությունն է թափանցում հայրենի բնաշխարհի ու ժողովրդի հետ ունեցած բազմաթիվ կապերի շնորհիվ: Սիրել հայրենիքը, ամենից առաջ նշանակում է խորապես իմանալ ու ճանաչել այն:

Իմ փորձից հանգել եմ այն եզրակացության, որ հայրենիքը ճանաչել տալու խնդիրը գրականության դասավանդման գլխավոր պահանջներից է: Մեր հայրենասիրական գրականությունը կատարյալ է, դրանք իրենց մեջ խտացնում են հայրենիքի պատմությունը, ոգին, և ուսուցչին այլ բան չի մնում, քան դրանք փոխանցել մատաղ սերնդին:

Գրականության ցանկ

1. Դավիթ Գասպարյան, Փակ դռների գաղտնիքը, Երևան, «Ապոլոն», 1994
2. Հայ գրականություն, գիրք 1-4, Երևան, «Զանգակ», 2000-2010
3. Ալեքսանդր (Ակսել) Ստեփանի Բակունց, Մեղադրական գործ N 4131, Երևան, «Հրազդան-1» ՍՊԸ, 1999
4. Ակսել Բակունց, Ժառանգություն, Երևան, «Զանգակ», 1999
5. Ակսել Բակունց, Կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 2009
6. Սուրեն Աղաբաբյան, Ակսել Բակունց, Երևան, «Հայաստան», 1971
7. Հրանտ Թամրազյան, Սովետահայ գրականության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1984